ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԹԻՎ 1 ԴԱՏԱԿԱՆ ԿԱԶՄԻ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ը

ԱՆՀԱՏԱԿԱՆ ԴԻՄՈՒՄԻ ԸՆԴՈՒՆԵԼԻՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Քաղ. Երեւան 18 սեպտեմբերի 2010թ.

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանի
թիվ 1 դատական կազմը՝

Նախագահությամբ՝ Վ. Հովհաննիսյանի
Անդամակցությամբ՝ Վ. Պողոսյանի
Կ. Բալայանի

Ուսումնասիրելով քաղաքացիներ Ասյա Ճաղարյանի եւ Վարդան Անդրիասյանի անհատական դիմումով գործը քննության ընդունելու մասին հարցը,

ՊԱՐԶԵՑ.

Համաձայն ՀՀ Սահմանադրության 101-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի՝ քաղաքացիներ Ասյա Ճաղարյանը եւ Վարդան Անդրիասյանը 06.09.2010թ. դիմել են ՀՀ սահմանադրական դատարան՝ խնդրելով քննության առնել եւ որոշել «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի 1-ին մասի համապատասխանությունը ՀՀ Սահմանադրությանը, մասնավորապես վերջինիս 8-րդ եւ 31-րդ հոդվածների պահանջներին:

Դատական կազմը գտնում է, որ դիմողների ներկայացրած փաստարկները վերաբերում են ոչ թե վիճարկվող դրույթի հակասահմանադրականության հիմնավորմանը, այլ՝ ընդհանուր իրավասության դատարանների կայացրած դատական ակտերի օրինականությանն ու սահմանադրականությանը: Մասնավորապես, դիմողների կարծիքով.

ա/ ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 03.03.2010թ. որոշումն ապօրինի է, քանի որ այն կայացվել է իրենց՝ Սահմանադրությամբ եւ օրենքներով ամրագրված նյութական եւ դատավարական իրավունքների ակնհայտ խախտումներով, բ/ ՀՀ վերաքննիչ դատարանը որոշում է կայացրել՝ հենվելով կիրառման ոչ ենթակա, առոչինչ իրավական ակտի վրա՝ սխալ մեկնաբանելով նաեւ կիրառման ենթակա, այդ թվում՝ նաեւ վիճարկվող հոդվածի դրույթները, որի արդյունքում առաջացել են ծանր հետեւանքներ, վտանգի տակ է դրվել սեփականության իրավունքի պաշտպանությունը, բացի այդ առաջացել է չափազանց վտանգավոր դատական նախադեպ եւ այլն:

Ելնելով դիմումի եւ կից փաստաթղթերի ուսումնասիրությունից եւ ղեկավարվելով «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 32 եւ 69-րդ հոդվածների պահանջներով, գործի քննությունը սահմանադրական դատարանի կողմից ենթակա է մերժման հետեւյալ պատճառաբանությամբ.

- դիմումի ուսումնասիրությունը վկայում է, որ դիմողները ոչ միայն չեն հիմնավորել վիճարկվող դրույթի ենթադրյալ հակասահմանադրականությունը, ինչը «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 69-րդ հոդվածի 4-րդ մասի իմպերատիվ պահանջն է, այլ նաեւ չեն հիմնավորել, թե վիճարկվող նորմի «հակասահմանադրականության» արդյունքում իրենց որ սահմանադրական իրավունքն է խախտվել, ինչպես նաեւ չեն հիմնավորել իրենց սահմանադրական իրավունքների ենթադրյալ խախտման փաստի և վիճարկվող դրույթի հակասահմանադրականության միջև պատճառահետևանքային կապի առկայությունը, ինչը, ըստ «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 69-րդ հոդվածի 7-րդ մասի եւ սահմանադրական դատարանի՝ ՍԴՈ-839 որոշման մեջ արտահայտված իրավական դիրքորոշման, անհատական դիմումն ակնհայտ անհիմն համարելու հիմք է: Կոնկրետ տվյալ դեպքում դիմողների համար առաջացած անբարենպաստ հանգամանքները նրանց նկատմամբ կայացված համապատասխան դատական ակտերի արդյունք են, այսինքն՝ խնդրո առարկա դրույթի սահմանադրականությունը վիճարկելով՝ դիմողներն ընդամենը բարձրացնում են դրա կիրառման իրավաչափության հարց: Նման եզրահանգման համար հիմք են ծառայում դիմումի տարբեր էջերում շարադրված փաստարկները, որոնք ուղղված են ՀՀ վերաքննիչ դատարանի եւ ՀՀ վճռաբեկ դատարանի կայացրած դատական ակտերի անօրինականության հիմնավորմանը:

Ղեկավարվելով ՀՀ սահմանադրական դատարանի՝ 2009 թվականի մարտի 17-ի ՍԴԱՈ-21 որոշման մեջ արտահայտված իրավական դիրքորոշմամբ, համաձայն որի՝ բոլոր այն դեպքերում, երբ դիմողը, ձևականորեն վիճարկելով օրենքի դրույթի սահմանադրականության հարցը, ըստ էության բարձրացնում է այդ դրույթի կիրառման իրավաչափության հարց, դատական կազմը գտնում է, որ այդպիսի դիմումները ենթակա են մերժման՝ «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի 1-ին կետի հիմքով՝ որպես սահմանադրական դատարանի քննության ենթակա հարց չառաջադրող դիմումներ:

Ելնելով վերոգրյալից եւ ղեկավարվելով «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածով, 32-րդ հոդվածի 6-րդ կետով, 69-րդ հոդվածի 7-րդ մասով, ՀՀ սահմանադրական դատարանի կանոնակարգի 26-րդ հոդվածով՝ ՀՀ սահմանադրական դատարանի թիվ 1 դատական կազմը

ՈՐՈՇԵՑ.

Քաղաքացիներ Ասյա Ճաղարյանի եւ Վարդան Անդրիասյանի անհատական դիմումով գործի քննությունը մերժել:

Նախագահող՝

Անդամներ՝

18 սեպտեմբերի 2010 թվականի
ՍԴԴԿՈ/1-26